ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐԻ ՄԱՍԻՆ

Մրցույթի ծածկագիրը՝ **UFAR-25/01**

ք. Երևան 04.06.2025թ.

Պատվիրատուն՝ «Հայաստանում Ֆրանսիական Համալսարան» հիմնադրամը, որը գտնվում է ՀՀ, քաղաք Երևան, Դավիթ Անհաղթի 10 հասցեում, հայտարարում է մրցույթ, որի արդյունքում ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել համակարգչային տեխնիկայի մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Մրցույթի արդյունքում Պատվիրատուն նպատակ ունի ձեռք բերել Հրավերի հավելված 1-ում նշված ցանկին, տեխնիկական բնութագրերին, քանակներին և մատակարարման ժամկետներին համապատասխան ապրանքները:

Ընտրված մասնակից որոշվում է հաշվի առնելով գնային առաջարկի և առաջարկվող ապրանքի որակական հատկանիշների համադրությունը: Հայտերը գնահատվում են ըստ առանձին չափաբաժինների: Ներկայացված հայտերի գնահատման արդյունքում մրցույթի պահանջներին համապատասխանող հայտեր ներկայացրած մասնակիցները կհրավիրվեն գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

Սույն մրցույթը հայտարարվում է առանց ֆինանսական միջոցների առկայության և ֆինանսական միջոցներ հատկացնելու կամ չհատկացնելու վերաբերյալ որոշումը կկայացվի միաժամանակյա բանակցությունների օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում: Ֆինանսական միջոցներ հատկացվելու դեպքում հաղթող մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել պայմանագիր: Հաղթող մասնակիցը պարտավոր է պայմանագրի նախագիծը ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում թղթային հաստատված պայմանագրի երկու օրինակ ներկայացնել Դավիթ Անհաղթի 10 հասցեով:

Սույն ընթացակարգին մասնակցության հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ համաձայն ստորև ներկայացվող հայտի պատրաստման հրահանգի, մինչև 18.06.25թ. ժամը 11:00-ն: Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Արման Համբարձումյանին:

Հեռախոս +37494105130

Էլ. փոստ achats@ufar.am

Պատվիրատու՝ «Հայաստանում Ֆրանսիական Համալսարան» հիմնադրամ

«ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿՐԳՉԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ՝ UFAR-25/01 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՄՐՑՈՒՅԹԻ

ՀԱՅՏԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ

Մրցույթի հայտերը անհրաժեշտ է պատրաստել համաձայն Հավելված 2-ի, Հավելված 2.1-ի և Հավելված 2.2-ի: Դրանք պետք է լինեն ստորագրված ընկերության տնօրենի կողմից կամ լիազորված անձի կողմից (այդ դեպքում հայտին կցվում է նաև լիազորագիրը): Հայտում նշվում է նաև ստորագրման ամսաթիվը: Էլեկտրոնային ստորագրության դեպքում ամսաթիվը առանձին նշելու անհրաժեշտություն չկա: Մասնակցի կողմից հաստատված (ստորագրված) փաստաթղթերը (Հավելված 2, Հավելված 2.1 և Հավելված 2.2) անհրաժեշտ է ուղարկել achats@ufar.am և rectorat@ufar.am էլեկտրոնային փոստի հասցեներին (անհրաժեշտ է ուղարկել երկու էլ. փոստերին միաժամանակ)՝ պարտադիր նշելով մրցույթի ծածկագիրը:

Հավելված 2-ը (դիմումհայտարարություն) պետք է ներառի հետևյալ տեղեկատվությունը. ընկերության լրիվ անվանումը, գրանցման և գործունեության հասցեները, ՀՎՀՀ-ն, ընկերության հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն, բանկային վավերապայմանները, տնօրենի անունը և ազգանունը:

Հավելված 2.1-ում (առաջարկվող ապրանքների անվանումները, մոդելները եվ տեխնիկական բնութագրերը) մոդելը սյունակում անհաժեշտ է նշել առաջարկվող ապրանքի մոդելը, իսկ եթե առաջարկվող ապրանքը բաղկացած է մի քանի բաղադրիչներից, ապա անհրաժեշտ է նաև նշել բոլոր բաղադրիչների մոդելները: Տեխնիկական բնութագիր սյունակում անհրաժեշտ է նշել առաջարկվող ապրանքի մանրամասն տեխնիկական բնութագիրը՝ հզորությունը, ֆունկցիոնալությունը, կիրառությունը, առանձնահատկությունը և այլ տեխնիկական պայմաններ: Եթե առաջարկվող ապրանքը բաղկացած է մի քանի բաղադրիչներից, ապա անհրաժեշտ է նաև նշել բոլոր բաղադրիչների տեխնիկական բնութագրերը՝ հզորությունը, ֆունկցիոնալությունը, կիրառությունը, առանձնահատկությունները և այլ տեխնիկական պայմաններ:

Հավելված 2.2-ում (առաջարկվող ապրանքների գնային առաջարկը) գնային առաջարկը անհրաժեշտ է լրացնել, նշելով առաջարկվող ապրանքի միավորի գինը (թվերով և տառերով) և ընդհանուր գինը (թվերով և տառերով):

Առաջարկվող ապրանքները պետք է համապատասխանեն Հավելված 1-ում նշված ապրանքների ցանկին, տեխնիկական բնութագրերի նվազագույն պայմաններին: Տեխնիկական բնութագրերի պայմանները գերազանցող առաջարկներ ներկայացվելու դեպքում դրանք կդիտարկվեն որպես առավելություն:

Մրցույթի հայտերը անհրաժեշտ է ներկայացնել մինչև 18.06.2025թ. ժամը 11:00-ն:

Հավելված N 1
UFAR-25/01 ծածկագրով մրցույթի

ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՁԵՌՔ ԲԵՐՎԵԼԻՔ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ

N	Անվանում	Տեխնիկական բնութագիր	Քանակ	Մատակարարման ժամկետ
1	Համակարգիչ	Համակարգիչը պետք է բավարարի հետևյալ նվազագույն պայմաններին. • Brand-name computers – HP, Dell etc.. • Form Factor - Tower • CPU – Min Intel i5-i7 14 generation (T-suffix processors are not acceptable.) • RAM - Min 32 GB DDR5 • SSD – Min 1 TB Nvme Fast Speed • Keyboard + Mouse – Querty • Monitor – Min 24" IPS • Windows 11 Pro Համակարգիչը և մոնիտորը պետք է ունենան նվազագույնը մեկ տարի երաշխիքային սպասարկման ժամկետ:	72	Պայմանագրի կնքման օրվանից երկու ամիս

Հավելված N 2
UFAR-25/01 ծածկագրով մրցույթի

ԴԻՄՈՒՄՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

_____ հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել
մասնակցի անվանումը

«Հայաստանում Ֆրանսիական Համալսարան» հիմնադրամ -ի կողմից UFAR-25/01 ծածկագրով հայտարարված մրցույթին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

_____-ի՝
մասնակցի անվանումը

Լրիվ անվանումը –

Գրանցման հասցեն –

Գործունեության հասցեն –

ՀՎՀՀ –

Էլ. Փոստ –

Հեռախոսահամար –

Սպասարկող բանկը –

Հաշվեհամարը –

Ընկերության տնօրեն –

_____ _____
մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. Տ.

Հավելված N 2.1
UFAR-25/01 ծածկագրով մրցույթի

_____-Ի ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ, ՄՈԴԵԼՆԵՐԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

N	Անվանումը	Մոդելը	Տեխնիկական բնութագիրը	Արտադրողի անվանումը
1	Համակարգիչ			

_____ _____
մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. Տ.

Հավելված N 2.2
UFAR-25/01 ծածկագրով մրցույթի

_____ -Ի ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԸ

մասնակցի անվանումը

N	Անվանումը	Միավորի գինը՝ ներառյալ ԱԱՀ /ՀՀ դրամ/ (թվերով և տառերով)	Քանակը (թվերով և տառերով)	Ընդհանուր գինը՝ Ներառյալ ԱԱՀ /ՀՀ դրամ/ (թվերով և տառերով)
1	Համակարգիչ		72 /յոթանասուներկու/	

_____ _____
մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. Տ.